ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 19

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում . . . . 14 ղրան
Գաւառներում . . . . . . 20 ղրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . 4 րբ. 50 կ.
Թուրքիա . . . . 50 ղուռշ
Եւրոպա . . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . . 2 տօլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Չորրորդ ,, ,, ,, 5 »

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւումէ գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք ,,ւ'' ի և ,,վ'' ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ -ու-ով:
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնւում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտքէ մեզ ուղարկել 2 ղրան 10 շահի:

№ 19 1912 Թ. ՇԱԲԱԹ 30 ՅՈՒՆԻՍԻ 1912 Թ. № 19

Ղալայի ծխականներ, վաղը Արամեան դպրոցի թատերասրահում վճռուելու է ձեր 60-ամեայ դպրոցների բաղդը: Գնացէք ժողովի, գնացէք համարձակ ու վստահ և ձայն տուէք արդէն թերթով յայտնուած ժողովրդական և անցեալ մաքուր գործունէութեամբ ծանօթ անձանց միայն: Թող ծագի ժողովրդական կամքի լուսապայծառ արևը և ցրուի ու չքանայ Ահրիմանականների խաւարը մեր կոյս դպրոցներից: Ժողովուրդ, դէպի ընտրութիւն:

ՈՐ՞Վ Է ՀԱԿԱՌԱԿ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ

—

Արտաքուստ այլ բան ասել և ներքուստ բոլորովին ասածի հակառակը գործել, ահա՛ նշանաբանն ու կեանքի նպատակը այն մարդոց, որոնք անմահացել են վերջին տարիների հայ լրագրութեանց մէջ «Թայֆայ» կամ «փրկիչներ»«հռչակաւոր»անուամբ:

Մօտ մի տասնեակ տարի է, որ այդ մարդիկ բռունցքի և արտաքուստ միայն շողշողուն սկզբունքների շնորհիւ թառել են մեր հասարակական գործերի պատասխանատու աթոռների վրայ: Պարազիտի պէս նրանքվինդ կպել են մեր դժբաղդ ազգային-եկեղեցական հաստատութիւններին և ծծել ու ծծում, անյագ ու անվերջ ծըծում են դոցա կենդանութեան հիւթերը:

Հակառակ ազգի գործադրած հսկայական ճիգերի՝ նոքա պոկ չեն գալիս այդ հիմնարկութիւններից: - Ուզէք չուզէք, ասում են նոքա մենք պէտք է նստած մնանք ձերվզին: Եւ որպէս զի արդարացնեն իրանց մահաշունչ գոյութիւնը և էլի շարունակեն պսակուած մնալ իրենց քար ու քանդ արած հաստատութեանց վրայ, միշտ հրապարակ են նետում մի նոր «գիւտ»

Այսպէս՝ Լիլաւի 15,000 թումանը շոգիացնելուց և նրա դպրոցները մանկացնելուց յետոյ, երբ այլ ևս երեսատեղ չմնաց՝ այդտեղ նախկին status quo-ն պահելու, աղգային մեր պարազիտների այդ քաջագունդ բանակը սկսեց առաջանալ դէպի Ղալա՝ նոր գիւտ և նոր աւետիս բերելով «տգէտ» Ղալացոց:

Համերաշխութի՛ւն... ահա՛ ի՞նչ են «դայլայլում» ազգային մեր այդ ագռաւները և «դայլայլում» են անվերջ ու ամեն տեղ:

Այդ «համերաշխութիւն» բառը այնպէս են շահագործում անցեալի իրենց «անարատ» և կարճան գործերով հպարտ մեր ,,փրկիչները'', որ կարծես այդ գաղափարին հակառակորդեր կան, ուստի և դոքա հասարակական ասպարիզից դուրս պիտի հանուեն:

Եթէ, իրօք, մեր հայ իրականութեան մէջ կայ մի խմբակ, որ հատեցրել է հասարակութեան [illegible] սիրտն է այրուած և որը հասարակական լեռնացած զզուանքի ու արհամարհանքի առաջ տեղի պիտի տայ, դա հէնց այդ ,,փրկչական'' պժգալի բանակն է, որ այսօր, ինչ-ինչ հաշիւներից մղուած, երգում է ,,համերաշխութեան'' մասին, նորէն մէկ-երկու տարի ազգի հաշուին ապրելու համար:[1]

Ի՞նչ են հասկանում «համերաշխութիւն» ասելով, կամ ի՞նչ են պահանջում այդ խօսքով մեր ,,պարզերեսները'':

—Այդ խօսքով նոքա յայտնում են, որ պէտքէ կայանայ երեք դպրոցների ծրագրների միութիւն:

Լա՛ւ: Բայց ո՞վ է հակառակ ծրագրական այդ միութեան: Ասէք, քարկոծման առաջին քարը մենք նետենք:

Մենք №-15 ,,Միտք''-ի յաւելուածի ,,Մերժում և Վնասակար ենք համարում'' խմբագրականում շատ բացորոշ, պարզ ու կտրուկ ասել ենք.

Պահելով Ղալայի և Լիլաւայի դպրոցներն առանձին և անկախ՝ իրենց հոգաբարձուներով և տեսուչներով, կարելի է սակայն մշակել մի եւ *)համանման լաւ ուսումնական ծրագիր բոլորի համար պարտադիր:

Ի՞նչ է հետևում այս գրուածից:

—Այն, որ մենք և մեզ հետ ամբողջ Ղալան կանգնած ենք ex animo ծրագրի միանմանութեան պահաջն անողների առաջին գծի վրայ:

Եթէ այսօր Ղալա-Լիլաւա անհաշտ և անհամերաշխ են, պատճառը դուք թայֆայականներդ էք, [illegible] ,,Հայրենիքով'' (և այժմ էլ, երբեմըն ,,Առաւօտի'' էջերում «խուլիգան» անուանած ,,Հորիզոնով'') անուանարկել, վատաբանել էք տասնեակ տարիներից ի վեր Ղալան և նրա վարիչներին և այդպիսով ստեղծել թշնամի կողմեր:... Ի՞նչ թոյն ու զրպարտութիւն չէք տարածել տեսուչ Աբեղնազովի և դեկավար պ. Զ. Նազարբէգեանի դէմ, որին այժմ, սողուններ, te Deum (զքեզ փառաւորեմք] էք երգում կեղծաւորաբար:

Այս բոլորից յետոյ հաւատա՞լ, որ դուք կարող էք հոգով համերաշխական լինել և անգամ մտածել ծրագրերի միանմանութեանց մասին:

Եթէ այսօր մեր երեք դպրոցները համանման ծրագիր չունին, էլի մեղաւորը, ինչպէս «Միտքի» նախորդ համարներով փաստօէն ցոյց տուինք, այժմ միայն «համերաշխութիւն» [!?) բղաւողներդ էք:

Թեմական պատգամ. ժողովը անցեալ տարի «ձեր» մարդկանցից կամ ձեր արժան համարածներից ընտրեց ուսումնական ծրագիր մըշակող մի յանձնախումբ: Անդամներն էին Կենտրոնականից՝ տեսուչ Յ. Դաւթեանը և ուսուցիչ Հայկ Յովակիմեանը, Լիլաւից՝ տեսուչ Պիօնեանը և ուսուցիչ Արտաշէս Յովհաննիսեանը, Ղալայից՝ միայն Աւագ Մելիք Աբրհամեանը «Համերաշխականնե՛ր», ի՞նչ եղաւ Ատրպատականի ձեր պառլամենտականների ընտրած ուսումնական այդ յանձնաժողովի մշակած ծրագիրը. կամ ինչո՞ւ չիրագործուեց՝ եթէ մշակուել էր: Չէ՞ որ պատգմ. ժողով, թեմ. խորհուրդ և ամեն կարգի ոյժ ձեր ձեռքին էր: Էլի ո՞ւրիշներն են մեղաւոր Ո՞վ թերացաւ:

Սորանից էլ աւելի պարզ ու անհերքելի ապացոյց, որ ամեն լաւ գործ դուք էք խանգարել ու մեռելութեան դատապարտել, որ [illegible] ները համերաշխութեան, կամ, ըստ ձեր, միանման ուսումնական ծրագիր ունենալուն:

Դեռ այդ բանի մէջ յայտնապէս պարտազանց լինելով դուք անխղճահար կերպով ծրագրի չըմըշակուելու հարցում, «Հորիզոնի» էջերում՝ մեղաւոր հռչակեցիք Կարապետ եպիսկոպոսին:

Եթէ Կարապետ եպիսկոպոսը մեղաւոր է, յամենայն դէպս ոչ այդ հարցում:

Մեղաւոր է նրանով, որ իր հինգ տարուայ թեմակալութեան օրով, երբ իշխանաւոր՝ համակերպեց ձեզ և չմաքառեց ու չկարողացաւ Լիլաւայում կրօնի դաս մտցնել:

Նա մեղաւոր է նրանով, որ իր բացել տուած կենտրոնականում կրօնի դաս մտցնել չկարողացաւ և տեսուչն առաւել իրաւասու ու դիկտատոր եղաւ ինչպէս միւս բոլոր, նոյնպէս և այդ հարցում, առարկելով որ «ուսուցիչ չգտնուեց» կրօնի դասատուութեան համար [!!??]:

Եւ, իրօք, եթէ Թաւրիզի մեր երեք դպրոցների ծրագրների մէջ կայ մի զգալի և այն էլ միակ տարբերութիւն, ապա այդ այն է, որ թայֆայականներդ *] հայ քրիստոնեայ ժողովրդի դրամներով պահուող Լիլաւի և կենտրոնականի դպրոցներից տիրաբար, իբրև «յիմարութիւն», կրօնի դասը ծրագրերից ու դպրոցներից խստապէս

---

1) Որովհետև այլ կերպ և այլ միջոցով ապրել չեն կարող ձրիակերութեան կամ պարազիտիզմի արդէն ընտելացած մեր «ագգաւները»:

*) Ընդ գծումը մերն է.

*) Անշուշտ էլի Մահկանացուներնու Մանկիկ էմալները «Հորիզոնում» կարճաւ կըկանչեն, «մասնութիւն» կրօնան: Խե՜ղճ մարդիկ, որ Դաւօներն ու Մանասեանները դուք էք ծնել վոհմակներով:

դուրս էք վռնդել, այն ինչ «խաւարամիտ» Ղալայում այդ կրօնը, ըստ ծրագրի պահանջման, աւանդւում է։

Դրանից դուրս այլ խօսր, անհասելի եւ անհարթելի տարբերութիւն չկայ երկթաղի դպրոցների ծրագրում։

Եզրակացութի՞ւն։

—Եզրակացութիւն այն, որ համերաշխութիւն ասելով դուք մոլորեցնում էք հասարակութեան և ձեր նպատակն էլ չէ ամենևին մեր ուզած ծրագրերի միանմանութիւնը, որ միշտ խանգարել էք, առաջ բերել։

Մայիս 27-ին Լիլաւի տեսուչը ակտր տալիս յայտնել է՝ միացնել Ղալայի եւ Լիլաւայի դպրոցները։

Ահա թէ դուք ինչի՞ էք ձգտում քօղարկուած ձևով և «համերաշխութիւն» խօսքի տակ։

Ձեր նպատակն է ընտրել մի այնպիսի հոգաբարձութիւն, որ ինչպէս միշտ, պարէ ձեր դուդուկով և պահէ մի տեսուչ երկու դպրոցների վրայ։ Պարզ ասած՝ դուք Ղալայի փողով՝ ուզում էք պահել ձեր քանդած և ձեռքից գնացած Լիլաւան, պահել ձեր «բարեխիղճ» տեսչին և ձեր մարդոց երկթաղի դպրոցներում։

Ահա այդ ժեզուիտիզմին մենք հակառակ ենք և հակառակ է նաև Ղալան, որ չի ուզում իր փողով դուք ու ձերոնք մի չարեք դառնաք իր գլխին՝ որպէս Լիլաւում։ Համեռաշխութիւն խօսքի տակ՝ դուք sub silento քօղարկում էք շատ բաներ։ Բայց այլեւս մանկամիտներ չկան որ խաբուեն։ Ձեր գլուխը լալու այլ տեղ և այլ Եփրատ փնտռեցէք։

«ՆՈՐ-ԴԱՐԻ» ԽՄԲԱԳԻՐ Ս. ՍՊԱՆԴԱՐԵՆԻ ՅԱՅՏՆԻ ԴԱՏԻ ՎՃԻՌԸ

Դաշնակցական կուսակցութեան նախաձեռնութեամբ Փարիզում հրաւիրուած Յեղափոխական դատարանը «Նոր-Դար» հայ լրագրի խմբագիր ըՍպանդար Ամիրջանեան Սպանդարեանի և Դաշնակցութեան գործի մասին, որ յարուցուել էր Դաշնակցական կուսակցութեան կենտրոնական օրգան «Դրօշակ»ում Սպանդարեանի՝ Պոլից. Դեպարտամենտի հետ յարաբերութիւն ունենալու մէջ մեղադրութեան հրատարակութեամբ։

Դատարանի կազմն էր՝ Ա. Ֆ. Ֆէյտ, որին դատաւոր էր ընտրել Սօց. յեղափոխական կուսակցութիւնը, Վ. Ի. Իգօրև, որին դատաւոր էր ընտրել Ռուսաստանի Սօց - Դեմօկրատական բանուորական կուսակցութիւնը, և Ա. Ֆ. Ստաալ, որին դատաւոր էին ընտրել վերոյիշեալ երկու դատաւորները և միաժամանակ նաև նախագահ նշանակել։

Քննելով դատարանին ներկայացրած փաստաթղթերը, լսելով էքսպերտների եզրակացութիւնն ու վկաների ցուցմունքները, ինչպէս նաև Սպ. ըՍպանդարեանի և Դաշնակցութեան ներկայացուցչի բացատրութիւնները, հետեւեալ հարցերը դրուեց վճռելու։

1. Հաստատուա՞ծ է արդեօք այն բանը, որ դատարանում յայտնի եղած հանգամանքներով Սպանդարեանը ծառայելիս է եղել Պոլից. դէպարտամենտում։

2. Հաստատուա՞ծ է արդեօք այն բանը, որ Սպանդարեանը (կամ նրա գիտութեամբ նրա ընտանիքը*) նրա վիճակը թեթեւացնելու և կամ այլ պատճառներով՝ դրդեց Կոստանդին Սպանդարեանին ծառայութեան մտնել Պոլ. Դեպարտամէնտ։

3. Հաստատուա՞ծ է արդեօք այն բանը, որ Սպանդարեանը՝ Կոստ. ըՍպանդարեանի Պոլից. դեպարտ. ծառայութեան մտնելուց յետոյ աջակցեց նրան քաղաքական լրտեսութեան գործում։

4. Արդեօք դաշնակցութեան կուսակցութիւնը բարեխղճօրէ՞ն վարուեց՝ մեղադրելով Սպան. Սպանդարեանին Պոլից. Դեպարտամենտի հետ յարաբերութիւն ունենալու համար, տպագրելով այդ բանը, և արդեօք նա հիմք ունէր փաստերը մեղադրութեան համար արժանահաւատ համարելու.

5. Արդեօ՞ք դաշնակցութեան կուսակցութեան կողմից չի՞ խախտուել մարդուն պատկանած ձևական ապահովութեան իրաւունքը, որի դէմ Դաշնակցութիւնը հրապարակով այդպիսի մեղադրանք է անում։

Հարցերից առաջին երեքին դատարանը բացասական պատասխան տուեց. դատարանում գործի բացայայտուած հանգամանքները ոչ միայն չհաստատեցին ա) Սպանդարեանի մեղադրութիւնը Պոլից. Դեպարտամենտի հետ յարաբերութիւն ունենալու մէջ անմիջապէս կամ իրա եղբայր Կոստ. Սպանդարեանի միջոցով, բ) որևէ ճնշում Կոստ. Սպանդարեանի վրայ՝ Դեպարտամենտ ծառայութեան մտնելու նպատակով և գ) աջակցելով Կոստ. ըՍպանդարեանի քաղաքական խուզարկութեան գործին, այլ և չեն կարող հիմք ծառայել կասկածելու Սպ. Սպանդարեանի այդ տեսակ վարմունքների մէջ։

Չորրորդ հարցին դատարանը դրական պատասխան է տալիս։ Նախքան Ս. Սպանդարեանի դէմ «Դրօշակում» հրատարակելը ամբողջ հանգամանքը այնպէս էր, որ Դաշնակցական կուսակցութիւնը բաւականաչափ հիմունք ունէր մեղադրանքը համարելու լիովին հաւատալի, անկեղծօրէն համոզուած էր Սպ. Սպանդարեանի մեղադրութեան մէջ, հետեւապէս գործել է լիովին բարեխղճօրէն՝ տպելով այդ մեղադրութիւնը։

Հինգերորդ հարցին դատարանը դրական պատասխան է տալիս։ Աչքի առաջ ունենալով, որ այդ մեղադրութիւնը զետեղուած է յեղափոխական կուսակցական կենտրոնական օրգանում, որ նրա արժանահաւատ լինելը յենուած էր բացառապէս կուսակցութեան հեղինակութեան վրայ և որ կուսակցութիւնը դրա բոլոր պատասխանատուութիւնը իր վրայ է վերցնում, դատարանը գտնում է, որ Դաշնակցութեան կուսակցութիւնը, նախքան մեղադրանքը հրատարակելը պարտաւոր էր այդ մասին տեղեկացնել Սպ. Սպանդարեանին։

*) Դաշնակցութիւնը չափազանց նեղն ընկնելով Սպանդարեանի անմեղութիւնը արտատւորած լինելու տգեղ յաւակնոտութեան պատճառով, դիմամբ յօրինել է այս 2-րդ և յետադայ 3-րդ կէտը, որ մի կերպ իրեն թեթեւացնի այլոց մեղադրելով։ Ծ. Խմբ.

Այս ձևական պարտաւորութիւնների կատարումը այս դէպքում կարող էր ազատել կուսակցութեանը ակամայ սխալից, իսկ Սպ. Սպանդարեանին էլ՝ իր բարի անունն արատաւորող ծանր հետևանքներից։

Ինչ վերաբերում է Սպ. Սպանդարեանին նիւթական վարձատրութիւն տալու հարցին Դաշնակցութեան կուսակցութեան կողմից այն վնասների համար, որ պատճառել է նրան վերոյիշեալ մեղադրութիւնը, դատարանը հնարաւորութիւն չունենալով գործի մէջ եղած փաստերի վերայ հիմնուելով որևէ պատասխան տալու և թոյլատրելի չհամարելով գործի վերջաւորութիւնը յետաձգելու դրամական պահանջների քննութեամբ, որոշեց.

Առաջարկել Սպ. Սպանդարեանին և Դաշնակցութիւն կուսակցութեան՝ այդ հարցը իրա ամբողջութեամբ վճռել աբբիտրաժի միջոցով, յանձին դատարանի նախագահի և կամ նրա անդամներից մէկի, իրա ցուցմամբ։

Այս վճիռը կայացրել են միաձայն և ստորագրել երեք դատաւորները։ Դաշնակցութիւն կուսակցութեան և Ս. Սպանդարեանին տրւում է սրա մի-մի պատճէնը նախագահի և դատաւորների ստորագրութեամբ, որոնք որ այդ րոպէին Փարիզում կը գտնուեն։ Դաշնակցութեան կուսակցութիւնը պարտաւորւում է այս վճիռը ամբողջութեամբ տպելու «Դրօշակի» մերձակայ** №-ում, իսկ Սպ. Սպանդարեանին իրաւունք է տրւում հրատարակելու այս վճիռը ամբողջութեամբ լրագրերում իրա ընտրութեամբ։

Դատարանի այս վճիռը վերջնականապէս կըպատրաստուի և կը յայտարարուի կողմերին տարոյս օգոստոս ամսի վերջին։ Փարիզ, 20 յուլիսի 1911

Նախագահ դատարանի Ա. Ստաալ

Դատարանի անդամ Բ. Իգօրեւ

**) Հակառակ դատարանի այս վճռի, Դաշնակցութիւնը, որովհետև խայտառակութիւնը շատ մեծ էր և անպարփակելի, ոչ միայն մերձակայ համարում չտպեց, այլ ամբողջ մի տարի յետաձգեց և այն էլ հրատարակեց հազար ծանօթութիւններով իւրաքանչիւր խօսքի տակ, չքմեղանք փընտռելով Փոազաների միջոցով, տես «Միտք № 5։ Այս գործի ամբողջութիւնը կտանք պարբերաբար։ Ծ. Խմբ.

Մեծ պառակտում եւ յուզում Ամերիկահայ 50,000 ժողովրդի մէջ

Ոստիկանները Ուստրի եկեղեցւոյ մէջ Գավթանեան եկեղեցիէն արտաքսուած

Ժամանակէ մը ի վեր պատահած անպատուաբեր դէպքերը, ցաւալի իրողութիւնները մեզ այն համոզման կտանեն թէ՝ յետ այսու մեր եկեղեցական խնդիրները, արարողութիւնները պիտի կատարուին ոստիկաններու ներկայութեամբ, եթէ ոչ արիւնահեղութիւնները պատրաստ են։

Երկար ամիսներէ ի վեր է որ Ուստրի Հայոց եկեղեցիին խնդիրը գժտութեան խնձոր դարձած է Դաշնակցականներու*) և Ռամկավարականներու միջև, որոնք կը ջանան իրարու ձեռքէ խլել դիմելով ամենաստոր միջոցներու իսկ։ Բայց ցաւալին այն է որ, ժողովուրդի մեծամասնութիւնը որ եկեղեցիի անունով կերդնու շատ անգամ, լոկ հանդիսատեսի դերին մէջ կըգտնուի ու ասոնց ականջներէն չի բռներ դուրս շպրտեր, որոնք կարատաւորեն Հայ անունը և հայ եկեղեցին։

Բայց այս քանով չի վերջանար կռիւը։

Յունիս 12-ին Ամերիկեան թերթերէն իմացանք որ, Գավթանեան որպէս Առաջնորդական փոխանորդ քանի մը թեթեւոլիկ դաշնակցականներու հետ կառավարութեան դիմած է հոգաբարձութեան հետունեցած իր հաշիւներուն համար, բայց դատաւոր կըպատասխանէ թէ. «Ես եկեղեցիին գործին չեմ ուզեր միջամտել, ամօթ է ձեզի, ձեր ազգին ու եկեղեցիին»։ Գավթանեան և իր թիկնապահ դաշնակցականներն այդ պատասխանէն անգոհ կը դիմեն ուղղակի Բարձր դատարանը (High Court) բայց դեռ ոևէ լուր չկայ, և չենք գիտեր թէ ինչ ելք պիտի ունենայ։

Սպասեցէք, դեռ աւելին կայ։

Հէնց այդ շաբթուն մէջ հոգաբարձութիւնը (Ռամկավարականներէ կազմուած) կուզէր որ Արսէն Վարդ. Վեհունի ըլլայ կիրակնօրեայ պատարագիչը, սակայն դաշնակցականներ Գավթանեան կըպահանջէին։ Յուզումը բռնկած էր ժողովին մէջ։ Հոգաբարձութիւնը, սակայն, փոխանակ պատուաբեր միջոցի դիմելու գործերը համեբաշխօրէն վերջացնելու, դիմած էր կառավարութեան, որը չորս ոստիկան ղրկած էր եկեղեցին։

Արսէն վարդ. պիտի պատարագէր։

Այսպիսի խռովութեանց պատճառաւ որ ժողովուրդը եկեղեցիին քովէն չէր անցներ, այդ օր խռնուած՝ ասեղ ձգելու տեղ չկար, այնպէս որ ոստիկանները հազիւ մէկ-մէկ անկիւն տեղաւորած էին։

Եկեղեցւոյ ժամերգութիւնը կսկսի Գավթանեան իր ընկերներով միասին քիչ յետոյ ներս կմտնէ ու կուզէ դէպի խորանը առաջանալ, բայց երբ կըտեսնէ ոստիկանները, կշուարիւարձանի նման կը կանգնի։

Դաշնակցականներէ կազմուած այդ խմբակը կուզէ առաջ տանել Գավթանեանը, բայց ոստիկանները կըհանեն ու զանոնք—Գավթանեան ու դաշնակ խմբակ—դուրս կարտաքսեն եկեղեցիէն։ «Եր. Հայաստան» № 20

15 Յունիս 1812 ՄԻՐԷՑ

Ուստր

1) Ախար չէ՞ որ Դաշ-ների սօց. չէֆերը 1906-ին էջմիածնի կենտրոնական ժողովում թքեցին կրօնի ու կաթուղիկոսի ու քրիստոնէութեան վրայ և հրամայեցին այդ բոլոր յետադիմական տարրերը դուրս վռնդել հայ ազգիմիջից և որոշեցին էջմիածնի գիւղերը բաշխել Թուրքերին. այժմ էլ ինչ են ասում և ինչ են խառնւում այդ «հոտած կղերի» պաշտպանութեան գործում Ինչ են ուզում այս մարդիկ խեղճ հայ ազգից։ Երբ և ինչ բանումայդ մարդիկհետևողական կլինին Ծ. Խ.

Բաց նամակ առաջնորդական փոխանորդ Տ. Կարապետ քահանայ Մանուկեանին

Արժանապատիւ հայր.

Թեմիս առաջնորդ Կ. եպիսկոպոսը որոշ հանգամանքների և ծխականների մեծամասնութեան տրամադրութիւնն ի նկատի ունենալով որոշել էր դ-րդ ընտրական ժողովը գումարել դըռբնփակ, ուր միայն հաստատուն ծխականները պիտի մուտք ունենային։

Նոյն օրբագան առաջնորդը մատաղիր էր, ըստ պահանջման, նաև ոստիկանական հսկողութիւն նշանակել բակում անկարգութեանց առաջն առնելու համար։

Արդ՝ քանի որ նոյն յետաձգուած ժողովն է որ տեղի է ունենում յառա-

ջիկայ կիւրակէ օր, և քանի որ նոյն պայմաններն են իշխում, հետևապէս անհրաժեշտ է օր առաջ ազդարարեք, որ յառաջիկայ ժողովը լինելու է դրբրնփակ զուտ ծխականների մասնակցութեամբ, հակառակ դէպքում որև է պատճառով ժողովի խանգարման պատասխանատուութիւնը ձեզ և ձեր խորհրդական անդամների վրայ կըծանրանայ։

Մի խումբ ծխականներ

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Վաղը Յուլիս 8-ին, առաւօտեան ժամը 10-ին, առաջնորդական փոխանորդ տ. Կարապետ ջահանայ Մանուկեանի կողմից, Արամեան դպրոցի թատերասրահում, նշանակուած է զալա թաղի ծխականների 4-րդ և վերջին ժողովը, ուր պիտի ընտրուին հոգաբարձուներ նոյն թաղի երկսեռ դպրոցների համար։

Յորդորում ենք մեր թաղի ծխականներին նախկին հոծ բազմութեամբ գնալ ժողովի և ընտրել արդէն յայտնի ժողովրդական մարդկանց որպէս հոգաբարձուներ։

Մեզ յայտնու..մ են, որ Լիլաւի դպրոցի աշակերտներին ոչ միայն կրօն չեն ուսուցել, այլև արգիլել են ամեն գրագէտ ու անգրագէտ քրիստոնեայի գիտցած «Հայր մերը» սովորել։

Այնպէս որ Լիլաւի դպրոցն աւարտած և կենտրոնական մտած աշակերտները իբրև մի խորթ նորութիւն լըսում և ասում են «ինչպէս թէ հայր մեր»։

Ահա թէ ովքեր են խօսում յանուն համերաշխութեան, յանուն մատաղ սերնդի կրթութեան և ժողովրդական գործունէութեան։

Բնութեան անզուսպ տարրերը նուաճող և ծովերի թագուհի Անգլիացիք, հզօր ու փառապանծ Գերմանացիք, Աւստրիացիք, Իտալացիք, Հոլանդացիք, Բելժիքացիք, Զուիցերիացիք, Միացեալ Նահանգները, մեր հարևան հսկայ Ռուսաստանը, մի խօսքով ամբողջ քաղաքակիրթ Եւրոպան դպրոցներդւմ պարտադիր է դարձնում քրիստոնէական կրօնի ուսումը և նոցա մէջ բւրաքանչիւր մի եօթ տարեկան երեխան «հայր մերը» անգիր գիտէ. իսկ մեր «իմաստուն» հայերիս «ամենագէտ փրկիչները» վերացրել և մոլորութիւն են համարում ամբողջ լուսաւորեալ Եւրոպայի ընդունած և պարտադիր դարձըրած կրօնի դասաւանդումը մեր ժողովրդի (կրօնով քրիստոնեայ) կոպէկներով պահուող դպրոցներում։

Եւ դեռ այս բոլորից յետոյ, երեւ կայ որոշ գոյնի այդ մարդկանց մէջ՝ այդ հոսանքի մարդոց իբրև հոգաբարձու անց կացնել Արամեան դպրոցի համար։

Ժամանակ է վերջապէս իւր կրթական հաստատութեանց տէր ու տնօրէն ժողովուրդը համարձակ գլուխ ու ձայն բարձրացնի ասելու՝ թէ մենք այս ենք կամենում, այսպէս պիտի լինի կամ չը լինի մեր դպրոցը և այսինչները այլևս բնաւ իբրև ուսուցիչ կամ հոգաբարձու իբրև մանուկ սերունդ այլասերողներ պիտի չլինի մեր դպրոցներում։

Մեզ հաղորդում են, որ հակաժողովրդականները, արդէն 3-րդ անգամը լինելով փոխել, են իրենց թեկնածուների ցանկը և այն «աղաներին» էլ, որոնց դէմ էին սկզբում այդ «դեմոկրատները» ճարահատ մտցրել են նոր ցուցակում, մէջ իբրև թայֆայական պահել կամ մտցրել են միայն մէկին, որ «միւսների վրայ ազդելով» (!!) արդէն քաղաքիս երեք դպրոցները կըպահեն մի ձեռքում և... յաղթում...։

Մեզ յայտնում են, որ իւր կնոջ մահուան առթիւ Խաչիկ խան Սարաճեանը 150 թուման փող է բաժանել Թաւրիզի աղքատներին։

Թաւրիզում՝ առաջնակարգ բանաստեղծ Յ. Յովհաննիսեանի 30-ամեայ յօբելեանի առթիւ տուած հանդիսի փողով Կարապետ սրբազանը գնեց և հետը բանաստեղծի համար նուէր տարաւ մի զոյգ Քիրմանի ընտիր խալիչաներ, մօտ 50 թումանի արժողութեամբ։

Շուշա-էդ Դովլի ստորագրութեամբ ամսոյս 4-ին պատերին կպցրած էր հետևեալ յայտարարութիւնը։

Ժողովրդի դիւր ու աժան կենցաղավարութեան համար կարգադրում ենք, որ շրջակայքից քաղաք բերուող ուտելեաց պաշարեղէնները-իւղ, պանիր, ալիւր, այլ և ածուխ և այլն պէտքէ մտցնուին քաղաք և բերուին Սահաբ-էլ-Ամիր կամ Հաֆթ-Քէչալի մէյդանը և և այնտեղ ծախուեն։ Այլևս առաջուայ պէս մարդիկ չերթան քաղաքի դռները և գիւղացոց բեռների առաջը կտրեն պաշարեղէններն իրենք առնեն և կենտրոնացնեն ձեռներում և բերեն թանկ գնով ծախեն քաղաքացոց։

Այս՝ վերջին շաբաթը ուտելեաց մթերքը բաւական աժանացել է, միսը, որ առաջ ծախւում էր 6 ղռ. 8 շահի, այժմ ծախւում 5-ից 4 շահի պակաս, [illegible] է երեք աբասի կամ 12 շահի։ Հացի լիդրը ծախւում էր 2-16 շահի, այժմ ծախւում է 2 ղռ։ Ածուխի լիդրը ծախւում է 26-27 շահի։

Մեզ հաղորդում են, որ ուրբաթ երեկոյ կենտրոնականի հոգաբարձուներից պ. Աբեանը անարգելով դուրս է արել պարտիզի բուֆետչիկ պ. Բաղդ. Շահգեալդեանին, որովհետև վերջինս համարձակուել է առարկել նրա լապտեր ուզելու ապօրինի պահանջի դէմ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Սալմաստում առաջնորդական փոխանորդ էր (երբեմն Եղիշէ ծ. վ. Մուրադեանի մօտ ծառայ) Կարախեա եպս-ից ծաղկեայ փիլոն ստացած Եղիշէ քահանան։ Այժմ մեզ հաստատ աղբիւրից հաղորդում են, որ այդ «սրբակրօն հայրը» այդտեղի առաջնորդական հասոյթ և այլ դրամներ-մօտ 3-5000 թմն.-գրպանելով «տեղափոխուել» կամ թռել է Վան, ուր իր այնտեղ գտնուող ազգային «գործիչների» շնորհիւ ձեռք է բերել Ս. Բարդուղիմէոս վանքի վանահայրութիւնը. Էջմիածնի ուշադրութիւնն ենք հրաւիրում...

Էլի մեզ յայտնում են, որ Դուխարղանի ազգապատկան հողերը օր աւուր կլանւում են թիւրքերից։

Վերջապէս Երբ այդ հողի յափշտակութեան առաջն կառնուէ՞։ Այդ էլ հօ Ղարադաղի անմատչելի լեռներում ու աւազակաբարոյ ժողովուրդների մէջ չի գտնւում։

Յայտնի Դերիկի վանքը, որ նորեց իր նախկին բարեկեցիկ վիճակի մէջն էր մտել (այժմ ներկայացնում է տաճկական հող), ունի 12 տուն քուրդ հպատակ Մամադիներ, վանքի վրայհսկում է Սալմաստի գործ. խորհուրդը, սակայն մէկ ինչ որ քուրդ Շէյխ սկսել է վանքի հողերը գրաւել։ Գործ. խորհուրդն այդ մասին յայտնել է թեմ. իշխանութեան։

Դերիկը ունի 20 հազար ոչխար արածացնելու միմիայն արօտատեղի։ Ներկայ քուրդ հպատակները տալիս են 100-ին երկու ոչխար։

Ո՞վ պէտքէ ազգային եկեղեցական կալուածների գրաւման առաջն առնէ.

Համերաշխականների վերջին թըռուցիկին ի պատասխան առ այժմ միայն Շնորհալիի այս տողերը կասենք.

Շուրջ պատեալ զինև
Շունք բազումք եղեն
Շաղախին արեամբս։ ...։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսկաստանը համաձայնեց Ռուսաստանի խորհուրդը կատարել և վերականգնել կօզակների բրիգադան, որի գլուխը լինելու են երկու ռուս օֆիցեր և չորս ունդէր-օֆիցեր։ Բրիգադան գտնուելու է Թաւրիզում։

«Մշակ» №-139

Սիփէհդարի և Պարսից կառավարութեան կռիւը շարունակւում է։ Սիփէհդարը շարունակում է մնալ Թէհրանում և ինտրագաներով զբաղուել կաբինէտի և բախտիարիների դէմ։ «Մշակ» №-140.

ԱԶԳԱՅԻՆ

Յուլիս 1-ին Ս. Էջմիածնում կատարուել է ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Հայրապետի օծումը։

Հայրապետը Պետերբուրգից իր դարձին ամեն տեղ փառաւոր ընդունելութիւն է գտել։ Առանձին շուքով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

From Barbarism to Socialism
The Great Sociologicale Crisis in a New Light

By
Prof. W. C. Bowman

ԲԱՐԲԱՐԻԶՄԻՑ ԴԷՊԻ ՍՕՑԻԱԼԻԶՄ

Առաջին գլուխ.

Թէ ինչպէս բարեշրջումը (էվօլիւցիան) կատարելիս է եղել իւր ընթացքը.

1. Կառավարութեան ծագումը

Մարդկային ընկերութիւնը և քաղաքական կառավարութիւնը մարդու հնարած կամ կամայական գիւտերը չեն։ Դրանք գոյութիւն են ստացել անհրաժան անհրաժեշտութեամբ այնտեղ, ուր ապրել է մարդկային ցեղը։ Դրանց տարբեր ձևերը սահմանուած են ոչ թէ խորամանկութեամբը կամ մինչև անգամ փառասիրութեամբը իշխողների, այլ արտաքոյ կարգի աճումը այն անհրաժեշտ պայմանների, որոնց ներքոյ նոքա սկիզբն են առել։ Սխալ է կարծել, որ մարդկանց հաստատութիւնները, օրէնքները, սովորութիւնները և հաւատքը, լինեն դոքա քաղաքական կամ կրօնական, միայն խորամանկ քըմերի կամ խորագէտ թագաւորների մեքենայութիւններն են։

Եթէ բարեշրջման (էվօլիւցիայի) մեր արդի փիլիսոփայութիւնը երբ և է մեզ մի բան սովորեցրել է, ապա այդ այն է, որ մարդկային պատմութեան ընթացքը (պրօցեսը) և յաջորդականութիւնը մարդկային դէպքերի՝ ոչ աստուածների քմահաճոյքի գործեր են և ոչ էլ մարդկանց վճիռներ, այլ պարզապէս ծնունդ են նախ ընթաց պայմանների անխախտ և անխուսափելի օրէնքների։

Բարեշրջման փիլիսոփայութիւնը գիտէ միայն փոփոխման այս մի օրէնքը--քաղաքական թէ բարոյական սահմաններում — որ ներկան անցեալի արդիւնքն է և ապագայի պատճառը։ Այս օրէնքի գործադրումը նոյնքան ակներև է մարդկային պատմութեան՝ որքան երկրաւական պատմութեան մէջ։ և քաղաքակրթութեան յաջորդական զարգացումները նախնական (պրիմիտիվ) օրերից հետևում են իրար ճիշտ նոյն ստուգութեամբ—ինչպէս օր. ցօղունը ծլում է արմատից, ճիւղը՝ ցօղունից, կոկոնը՝ ճիւղից ծաղիկը՝ կոկոնից, և պտուղը՝ ծաղկից։

Նիւթի այս գիտական տեսակէտն է, որ պէտք է չափաւորէ մեր մեթոդներն ու ոգին, իբրև բարենորոգիչների։ Որքան ժամանակ որ մենք այն պատրանքի ներքոյ լինինք, թէ ընկերութեան և կառավարութեան սխալներն ու թշուառութիւնները արդիւնք են մի որոշ նպատակի և դաւ՝՝ ընկերութեան մի կիսի կողմից վնասելու և կողոպտելու միւս կիսին, ապա դա բոլորովին բնական կլինի տանջուողների համար, որ նրանք անձնատուր լինին դառնութեան և վրէժխնդրութեան ոգու. Բայց հենց որ գալիս ենք այն հասկացողութեան, որ այս թշուառութիւնները արդիւնք չեն չար նպատակների, այլ՝ սխալ պայմանների, այս դառնութեան ոգին տ զի է տալիս հարցի վրայ նայելու մի խաղաղ և փիլիսոփայական տեսակէտի, տեղի է տալիս մաքի անդորր և ինքն ըստ ինքեան արժանաւոր մի դրութեան, մի մտածելակերպ, որ ներդաշնակութեան մէջ է բանականութեան և ներողամտութեան հետ։

Բայց այս նոր գիւտը չի թուլացնում մեր բարենորոգչական ջանքերը, այլ դա միայն փոխում է մեր գործի ոգին, որը այլևս չի լինում անձնական կռիւ ընդդէմ յայտնապէս վատ մարդկանց, հապա դառնումէսկզբունքների մի պատերազմ ընդդէմ իսկապէս մի յոռի սիստեմի։

Բնաշրջման այս փիլիսոփայութիւնը շատ պարզ ուսուցանում է մեզ կառավարութեանց և քաղաքակրթութեան պայմանական ծագումը։ Ոչ միայն բոլոր կառավարութիւններն իրեք այլ և բոլոր փոփոխութիւնները, որոնց նրանք ենթարկուել են շնորհիւ բարենորոգումների և յեղափոխութիւնների, առաջացել են իբրև բնական և ինքնածին պատասխաններ շրջապատի հարցերի։

Թէ նահապետական իշխանութիւնը (Patriarchal) կառավարութեան նախնական ձևն էր, դա ոչ պատահար էր և ոչ էլ մարդկային մի ծրագիր, այլ իբրև պարզ հետևութիւն նախնական իրերի դրութեան, երբ ընտանեկան ազգակցութիւնը բռնում էր առաջին տեղը զարգացման օրէնքում։

(Շարունակելի.)

Կարլ

ընդունել է վեհին Թիֆլիզ քաղաքը։

Թիֆլիզի վանքի եկեղեցում վեհը խօսել է քարոզ։

Այդ քարոզը (?!) իւր համառօտութեամբ, բարձրաթռիչ մտքի և հիպնոսող ու նոր խօսքի բացակայութեամբ՝ կարծում ենք, ամենքի վրայ և շատ... սառը և աննպաստ տպաւորութիւն թողած կլինի։

Հայութեան կենտրոնում, կայսերական և ժողովրդական այդքան սիրալիր ընդունելութիւններից յետոյ, սպասելի էր որ հայոց կաթողիկոսը արտասանէր դարագլուխ կազմող, ժողովուրդ ցնցող, ոգևորութիւն, և նոր ազգային հսկայ շարժում առաջացնող մի պատմական քարոզ։ Գոնէ մենք այդ էինք սպասում մեր հաւատոյ առաջնորդից և մեր պապերի աւետարանի քարոզչապետից։

Պօլսոյ ազգային ժողովի նոր նստաշրջանի I. նիստը՝ Արշարունի պատրիարքը բացել է մի ընդարձակ ճառով։ Ներկայացրել է հողային, կրթական, Երուսաղէմի պատրիարքի ընտրութեան, ազգային եկեղեցին «ծիսական, վարչական և կանոնական տեսակէտով, բարեկարգելու»-ժամանակի ոգոյ և պահանջման համաձայն-ամուսնական գժտութիւնների, կնաթողութիւնների, այրաթողութիւնների, պատրիաքարանի ներքինբարեկարգութեան և այլ շատ հարցեր, որոնք շտապ լուծումն են պահանջում։

Զափազանց ուշագրաւ են պատրիարքի հետևեալ իրաւացի դիտողութիւնները.

«Ազգին ծովացած ցաւերուն դարման կպահանջուի Պատրիարքարանէ, միւս կողմէ անոր [illegible] առաթուր կկոխտուի։ Ինչպէս հաշտեցնել այս երկու պարագաներն իրարու հետ... Տեարք երեսփոխանք, ձեր ցաւատանջ Պատրիարքը նոր նստաշրջանի առիթով կոչում կընէ ձեր բարոյական և ազգասիրական ամենամաքուր զգացումներուն։

Կխնդրեմ յարգեցէք օրէնքը, համերաշխեցէք իրարու հետ, որպէս զի ապրենք ու ապրեցնենք այս սրտաբեկ ու մարտիրոսացած պատմական ազգը»։

Մարզուանում (Անատօլու-Փոքր Ասիա) մի ընտրական պայքարում Դաշնակցականները երեք ժողովում իբար վրայ սևանալուց և Հնչակեանների յաղթանակելուց կատղած՝ ժողովները միշտ վիժեցնում են և դիմում ծեծի

Այդ պարագային ժողովուրդն ընկնում է նրանց վրայ և ջարդ ու թակով վռնդում դուրս ժողովից։ Այս բոլորից ջղայնացած՝ Դաշնակցականները գնում և մատնում են կառավարութեան՝ տեղական Հնչակեան մ-ճիւղի բոլոր անդամներին։ Օսմանեան տեղական կառավարութիւնը ձերբակալում է մասնաճիւղի բոլոր անդամներին, գրաւում է դօկումէնդներ և ըսկսում երկար քննութիւն։ Մանրազնին քննութիւնից յետոյ՝ դատարանը արձակում է բոլոր ձերբակալուածներին և յանձնում նաև գրաւած թղթերը, յայտնելով որ նոցա մէջ «միւզիր», (վնասակար) ոչինչ չի գտել։ Ով ամօթահար մնաց։ Եւ դեռ սրանք են, որ այլոց հասցէին «մատնութիւն, մատնութիւն» են բոռում։

Այսպիսի մի մատնութիւն արել էին և Թէհրանում քաջ «տղերքը» երբ Հնչ. կուսակցութեան կենդրոնի ներկայացուցիչ Դր. Եղիկեանը Մաղսուդիէ փարքում ուզել էր դասախօսութիւն տալ Պարսկերէն լեզուով։ Ազգի «արթուն պահապանները» շտապել յայտնել էին [մատնել էին) ուր անկ է, որ Բաբիական ժողով է գումարւում, թող մարդ ղրկեն և խափանեն։ Ուղարկուել էին մի քանի սէիդներ, որոնք դասախօսութեան ներկայ լինելով՝ միայն գովք ու հիացմունք էին տարել իրենց շէֆերին։ Վերջիններս էլ Շապուհին պատմական խօսքերը էին ասել մեր «եռանդուն դակլադչիների» մասին,

Ամասիայում (Անատօլու] Դաշնակցականները Մայիս 27-ին «հայ ազգի զօրավար Եփրեմ խանի անմահ յիշատակին սգահանդէս» պիտի կատարէին։ Այդ նպատակով մի պաշտօնական նամակով դիմել էին տեղական Հնչ. մասնաճիւղին, որ վերջինս էլ մի ներկայացուցիչ ղրկի հոգեհանդիսին խօսելու։ Մասնաճիւղը սիրով ընդունում է հրաւէրը և գրաւոր յայտնում, որ ժամանակին իր այս ինչ ներկայացուցիչը կուղարկուի մասնակցելու և խօսելու սգահանդիսին։ Կոմիտէականները, երևի, վերջը նկատում են, որ մեծ սրբապղծութիւն են արել Եփրեմի հանդէսին մի հնչակեան բանախօս կանչելով, դադարեցնում են սգահանդէսը, չծանուցանելով այդ մասին ո՛չ ժողովրդին և ո՛չ էլ հնչակեան մասնաճիւղին, որի ներկայացուցիչը որոշեալ ժամին ժամադրավայրը գնալով՝ ո՛չ սգահանդէս է տեսնում և ո՛չ ժողովական։ Մանրամասնութիւն ու դօկումենդներ յաջորդ համարով։ Ի՞նչ կասէք գաղափարի այդ «ազնիւ» հակառակորդներին։

,,Ամասիա'' կիսամսեայ հանդէս, թիւ 16, 30 Մայիս։

Մի՛ աղտոտէք Գուտտենբերգի գիւտը

Ցոյց տալու համար, թէ որոշ տիպի մարդկանց հոգեկան ախտաժէտութիւնը մինչ ո՛ր աստիճան կարող է հասնել, թէ այդ մարդիկ որքա՜ն անազնիւ [illegible] հարիւր քառասուն և հինգ մարդոց ներկայութեամբ կատարուած իրողութիւնն ընդունակ են «սրտի ու խղճի» ամենայն հանգստութեամբ հիմն ի վեր շուռ տալ, աղաւաղել փաստերը, սեպհական փողոցավայել այլանդակութիւնները և անպատկառութեան սխրագործութիւնները ուրանալուց բացի՝ այդ բոլորը ա՛յլոց վզին փաթաթել-առաջարկում ենք մեր արգոյ ընթերցողներին անպայման ձեռք բերել «Հորիզոնի» 136 թիւը և կարդալ այնտեղ «Թաւրիզի Բարքերից» վերնագրով յօդուածը ուր չարամտօրէնմիայն նկարագրուած է Յունիս 10-ի Արամեան դպրոցում գումարուած ընդհ. ծխական ժողովը։ Այդ յօդուածում այնքան սուտ կեղծիք եւ զրպարտութիւն կայ, որքան չկան տառեր։

Թո՛ղ կարդան ամենքը և որակեն մեր մէյդանի հերոսներին կամ բարոյական այդ թափթփուկներին, որոնք երդուել են իրենց ամեն կարգի սրբերով և սրբութիւններով ոչ ամաչել և ոչ խղճահարուել, այլ անպատկառութիւնն ու մոլորեցումը նպատակ դըրած՝ ուխտելենզբաղիլ զրպարտութեամբ կամ անձնականը խծբծելու։

Տարաբաղդ Գուտտենբերգ որի հըրաշալի գիւտը անխղճօրէն արատաւորում են սոսկալիօրէն պղծաշուրթն և ժանտահոգի մարդիկ։

Այս ամենը տարօրինակ կամ անսպասելի չեն արդէն յայտնի կուրսի մարդկանց կողմից, սակայն տարօրինակ ու անսպասելին «Հորիզոնի» ասպնջական լինելն է հոգեպէս և մարմընապէս բորոտալից այդ տիպերի և նոցա զրպարտա-զազրախօսութեանց համար։

Հասարակական ցեցե՛ր...։Hands off!

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԵԼ Է ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ
բուժարան (լէչէբնիցա)
Արժէքները չափազանց մատչելի են։ Աղքատները բժշկւում են բոլորովին ձրի։ Հիւանդներ ընդունւում են առաւօտեան ժամը 8—1, երեկոյեան ժամը 3—6

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ՝ ՄԱՏԻՆԵԱՆ

МАГАЗИНЪ ПАРИЖЪ
MAGASINS DE PARIS-TABRIZ.
PROPRIÉTAIRE J. D. THOMASSIAN



ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ
ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒԶՆԵՐ
ՓԷՇԵՐ եւ ԻՒՊԿԱՆԵՐ
ՆՈՐ ԿՏՈՐՆԵՐ
ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԳՆԻ ՊԱՏԻՍՏՆԵՐ
ՕՃԱՂՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԻ
ԵՒ ԽԻՍՏ ԱԺԱՆ
ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ
Նշանդրէքի և հարսանեաց բոմբոններ և չիրիններ, կանացի բաժիմեբայ զգեստներ, տղամարդկանց անգլիական [illegible] կօշիկներ և թարմ շոկոլադներ։

ԳԱՐՈՒՆ
(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

Նոր ստացել են ՄԵՏԱՔՍԵԱ ԸՆՏԻՐ ԲԼՈՒԶՆԵՐ, ՍՊԻՏԱԿ ԼԱՒ ՔՈԹԱՆՆԵՐ, տղամարդկանց ԿՈՃՏ ԳԼԽԱՐԿՆԵՐ, ԵՐԿԱՐՏԱԿ ՎԱՐՏԻՔՆԵՐ, ճաշակաւոր ԳԱԼՍՏՈՒԿՆԵՐ, անձեռոցիկներ, երեխաների գլխարկներ և զանազան տեսակի հետաքրքիր խաղալիքներ։
Ընդունելով ԵՂԲԱՐՔ ՍԷՑԼԱՆՈՎՆԵՐԻ ՌՈՒՍԻՏՐԱԿԱՆ ՏԸՆ ներկայացուցչութիւնը, պատիւ ունիմ յայտարարելու ի գիտութիւն սպառողների, որ ընդունում եմ նոյն ֆիրմայի պատրաստի պապիրոսների պապիրոսների և ծխախոտների պատուէրները։ Պատուէրներ կարելի է տալ 50000 հատից սկսած. իբրև կանխավճար վերցնում ենք 100-ին 150 | 0 գները հաշւում ենք գործարանի հաշւով, ցանկացողները կարող են վերցնել պրէյսկուրանտ։

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ
Больница
Возобновился амбулаторный и стаціонарный пріемъ больныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.
Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются безплатно
Завѣдующій больницей
докторъ Ваганъ Геворковъ

ԲԱՂՆԻՍ Ա. ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
Ի գիտութիւն Թաւրիզի յարգոյ հասարակութեան յայտարարում ենք, որ բաղնիսի ջուրը, որ առաջ մատակարարւում էր Ղալա Թաղից, այժմ բերւում է Լիլաւից։
Այն չքաւոր կանայք և աղջիկները, որ առաջ մարդագլուխ վճարում էին չորս աբասի, այժմ մի մի աբասի պակասեցուած է նոցա այդ տուած նախկին արժէքից։ Յաճախողները խիստ գոհ կմնան բաղնիսի մաքրութիւնից և ջրի լաւութիւնից։

ԴՈՔՏՈՐ ՍԱՐԳԻՍԸ
Ամեն ուրբաթ օրերը ժամը 2-ից, կէսօրից յետոյ, ձրի խիւում է աղքատների և չքաւորների երեխաների ծաղիկները։